№ 13 ՇԱԲԱԹ 3 ԱՊՐԻԼԻ 1876 № 13

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻՋԱԿ ՏՈՂԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԷԿ:
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով.

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՕՐ
ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 7 Ռ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Въ редак. газеты „Пчела Арменіи".

ԻՆՆԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԱԹ ՄԵՂՈՒՆ ՉԻ ՀՐԱՏԱՐԱԿՎԻԼ ՏՕՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ:

ԹԻՖԼԻՍ 3-ԻՆ ԱՊՐԻԼԻ

Մեր գրականութեան մէջ բազմիցս զարթել է հարցն եկեղեցականաց վիճակի մասին, սորա թշուառութեան առաջն առնելու դիտաւորութեամբ: Այս մասին եղել են տեսակ տեսակ առաջարկութիւնք: Վերջին ժամանակ նոյն հարցը պարապեցրել էր և տեղւոյս Ռուս „Кавказъ" լրագրին, որ նկարագրելով մեր հայ եկեղեցականաց վիճակը, հետամուտ է լինում նրան, թէ որքան կլինին արդեօք մեր եկեղեցիների արդիւնքներն Ռուսաստանում: Այս հետազօտութեան համար չունենալով ճիշդ տեղեկութիւնք և զարմանալով առհասարակ մեր հոգևոր վարչութեան անհոգութեան կամ աւելի ճիշդը յամառութեան վերայ, եկեղեցական արդեանց և ծախուց հաշուետուութեան մասին, ինքն անում է կարծիքական եզրակացութիւնք: Այս եզրակացութեանց արդիւնքն այն է, որ մեր եկեղեցիներից իւրաքանչիւրի արդիւնքն մերձաւորապէս 45—50 ռուբլի է, որով անհնար է ապահովել նորա մէջ ծառայող եկեղեցական պաշտօնէից վիճակը:

Ուրիշք այս մասին առաջարկել են իբրև միջոց որոշեալ հարկ դնել իւրաքանչիւր հայ ընտանիքի վերայ և այսպէս ժողոված գումարից եկեղեցական պաշտօնէից նշանակել ռոճիկ: Սա գուցէ լաւ լինի, բայց մերայնոց մէջ անիրագործելի է, վասնզի անշուշտ այդ հարկի մեծ մասն ապառիկ կը մնայ և ով պիտի ստիպէ վճարելու մի հարկ, որ ստիպողական չէ: Այս մասին մենք էլ կրկնում ենք մեր կարծիքն, որ նայելով մեր ժողովրդոց վիճակին և հասկացողութեան աւելի իրագործելի է: Հեշտ է հայ ժողովրդեան հասկացնել, որ բոլոր քահանայք հաւասար են և թէ ամենքի պաշտօնակատարութիւնն էլ համահաւասար ընդունելի է. ուստի և միևնոյնն է իւրաքանչիւր անձի համար, թէ այս կամ այն քահանայն է հովւում իրան: Այս գաղափարն աւելի շուտ կ'իրագործվի հայերի մէջ քան մի կամուր, բայց որոշեալ հարկի պահանջումն:

Այնուհետև հարկ կլինէր բոլոր ժողովուրդը բաժանել երեք կարգ՝ հարուստ, միջակ և աղքատ ու ամեն մի քահանայի հաւասար մասն հանել իւրաքանչիւր դասակարգից: Այստեղ կարելի էր մինչև անգամ, ըստ հին սովորութեան, աւագ քահանայից համար նշանակել 10 կամ քսան տուն աւելի ժողովուրդ:

Եթէ իւրաքանչիւր քահանայի համար որոշվէր 150—200 տուն կամ աւելի ժողովուրդ, մենք անտարակոյս ենք, որ նա բոլորովին ապահով կը լինէր և գժգոհ չէր մնալ իւր վիճակից և չէր ստիպվել աղքատութեան վիճակը կրել, որին այժմս ենթարկված են մեր եկեղեցականներից շատերը:

Ինչի՞ց է այս վիճակը. նախ նրանից, որ ժողովուրդը հաւասար բաժանած չէ քահանայից մէջ, որոնցից ոմանք շատ ունին և այլք սակաւ և երկրորդ իրանց եկեղեցականների անչափաւոր թուից:

Թիֆլիսի մէջ երկու քահանայ չկայ, որոնց ժողովրդոց թիւը հաւասար լինէր և վերջապէս Թիֆլիսի ժողովրդոց թուին նայելով (6000 տուն կամ փոքր ինչ աւելի) 30—40 քահանայք հերիք էին, նոցա հոգևոր պիտոյքը, համաձայն մեր եկեղեցու պահանջմանց, լցուցանելու, այն ինչ այժմ, կարծեօք, քահանայից թիւը 60ից աւելի է: Պարզ է, որ այս աւելորդ 20 կամ 25 քահանայք թէ իրանք աղքատութեան ենթարկված պիտի լինին և թէ նուաղեցնեն այլոց արդիւնքն մասամբ, որով նոքա ևս կատարելապէս ապահոված չպիտի լինին: Քահանայից թիւը համեմատ ժողովրդեան թւոյն որոշելուց յետ մեծ ուշադրութիւն պէտք է դարձնվէր նորա վերայ, որ 'ի քահանայութիւն և յայլ եկեղեցական պաշտօնակատարութիւն կոչվէին ամեն կողմանէ, ըստ ուսման և վարուց ու բարուց, արժանաւոր անձինք միայն, որ ժողովրդոց մէջ հաստատ մնար քահանայից հաւասարութեան գաղափարը,

Մենք կարծում ենք, որ այս մեր առաջարկութիւնը ներկայումս մեր մէջ հեշտ իրագործելի է, և կախված է լոկ հոգևոր իշխանութեան հաստատուն կամքից և ցանկութիւնից: Ու որքան գեղեցիկ է ապագան. ապահովութիւն եկեղեցականաց, բարեզարդութիւն եկեղեցւոյ և ժողովրդեան բարեպաշտութեան և ջերմեռանդութեան յաւելումն: Ժողովրդեան վերայ հարկ դնելն եկեղեցւոյ համար դժուար է և նրան անհասկանալի. վասնզի նա թէ իւր եկեղեցին ազատ է համարում հարկից և թէ չէ ճանաչում նորա ժողովրդեան վերայ հարկ դնելու իրաւունքն: Իսկ նորա պայծառութեան համար միշտ եղել է և է պատրաստ առատութեամբ տալու իւր կամաւոր նուէրը: Հայը իւր եկեղեցուն սառնութեամբ տուրք տալու սովոր չէ, նա միշտ անում է իւր նուէրն, երբ զարթնում է նորա մէջ ջերմեռանդութիւն և նա գտնում է մխիթարութիւն եկեղեցւոյ մէջ: Նայեցէք հայ ժողովրդականին եկեղեցու մէջ: Նա աղօթում է, շարժվում է—ապա գնում է մոմ և վառում որևէ պատկերքի առաջ: Նա շարունակում է իւր աղօթքը և շատ քանիցս անգամ կրկնում է իւր նուիրատուութիւնն եկեղեցական պաշտօնէից և եկեղեցւոյն գանձանակաց մասնակցելով կամ մոմ վառելով:

Սոյնպէս և կեանքի մէջ ամեն յաջող կամ անյաջող դէպք դարձնում է հային դէպ Աստուած կամ իւր երախտագիտութիւնն յայտնելու նրան յաջող դէպքի համար կամ իւր մխիթարութիւն գտնելու նրանից անյաջող դէպքում: Երկու դէպքումն էլ նա իւր Աստծուն դիմելու և նրան հաճոյանալու համար միջնորդ է ընտրում իւր եկեղեցին և եկեղեցականներուն, որոնց և տալիս է իւր նուէրը:

Ներկայումս, մեր կարծիքով, ժողովրդեան հէնց այս ջերմեռանդ զգացմունքը պիտի ապահովէ եկեղեցականներուն: Ուստի և կը մնայ հոգևոր իշխանութեան խոհեմութեամբ օգուտ քաղելու նրանից և ապահովելու եկեղեցականաց վիճակը, պահպանելով այս ջերմեռանդութիւնն և զօրացնելով այն: Սորա էլ միակ միջոցն է արժանաւորներուն միայն կոչել յեկեղեցական պաշտօն և պաշտօնէից թիւը չափաւորել: Իւրաքանչիւր քահանայ էլ պէտք է ունենայ իւր ուսումնաւարտ տիրացուն, որ ապագայում փոխանակէ որևէ հանգուցեալ քահանայի:

Իսկ ինչ կվերաբերի Кавказъ լրագրի յօդուածագրի զարմացման մեր հոգևոր իշխանութեան եկեղեցական արդեանց և ծախուց հաշուետուութեան վերաբերութեամբ, այդ մեզ համար էլ զարմանալի և անհասկանալի է: Եթէ նա դրանով կամենում է ծածկել իւր հարստութիւնը, յափշտակութիւնից երկիւղ քաշելով, դա ժամանակ չճանաչել է նորա կողմից, վասնզի այժմ անցած է յափշտակութեան դարն. այժմ ամեն սեպհականութիւն ապահովված է. իսկ եթէ հոգևոր իշխանութիւնն իւր լռութեամբ կամենում է ծածկել հայ եկեղեցու աղքատութիւնն, դա էլ անօգուտ է, վասնզի կայ նրան միայն աղքատ—հպարտ ածականը:

Մենք ուրիշ անգամ աշխատ կ'լինինք հաղորդելու Մեղուի ընթերցողներին գէթ սուրբ Էջմիածնայ աթոռի գլխաւոր և հաստատուն արդիւնքների ցուցակն, որ մեզ հաղորդել էին սուրբ Աթոռից քաղելով 1874 թուականի հաշուեցուցակից, որով գէթ մերձաւորապէս կարող կլինին մեր Հայ եղբարք կազմել գաղափար այս մասին:

ԱԶԳԱՅԻՆ

Մարտի 28ին Ծաղկազարդի օրը պատարագին Նորին Բարձր Սրբազնութիւն Մակար Արքեպիսկոպոսը տուեց ժողովրդեան իւր հրաժարականը: Նա յայտնեց, որ 14 տարի առաջ գալով Սուրբ Էջմիածնից Թիֆլիս հովուութեան պաշտօնով ողջունեց ժողովուրդն սուրբ Տաճարի մէջ և այժմ համաձայն կամաց Նորին Օծութեան թողնելով իւր պաշտօնն և վերադառնալով Աթոռը տալիս է իւր հրաժարականը նոյն Տաճարում:

Նորին Բարձր Սրբազնութիւնը գոհութիւն և շնորհակալութիւն յայտնելով ժողովրդեան իւր յընթացս առաջնորդութեան տեսած յարգանաց և պատւոյ համար, պարտք համարեց համաձայն Փրկչի պատուիրանքին թողուլ նրան խաղաղութիւն և սէր

ՖԵԼԻԵՏՕՆ

Իմ դժուարութիւնները: Ես խելօքացայ. Քաղաքային վարչութեան նիստերը. Тиф. Вѣст. լրագիրը. Փոխադարձ վարկի ընկերութիւնը. Սորա պատուած անդամները. Բագուի փոխադարձ վարկի ընկերութիւնը. Մեղուի և Մշակի բարեկամութիւնը. Ռաֆայելու թեթևամտութիւնը. Մեծ սպասի հայերէն ներկայացումն. Լուսմա և փորձ: Փորձի անխորհրդութիւնը. Տիօրական ժողովրդագրութիւնը: Իմ խոստումն:

—

Հիմայ որ մտածում եմ ու սկսում եմ ամեն բան լաւ քննել, քիչ քիչ այն համոզմունքի եմ գալի ու հաւատում եմ, որ առաջ ես «չարախօս, գիժ» եմ եղել......

Ով կը զարմանայ ասածիս վերայ, նա էլ անկասկած ինձանից «գիժ» կը լինի:

Լսեցէք ու հաւատացէք:

Էր ժամանակ, որ հէնց բերանս բաց կանէի — սկսում էի զանգատներ ու վէճեր, մի մարդ ասող լինի — ով էր ինձ լսող: Հէնց մի խօսք կ'ասէի — սկսում էի բարկանալ, մի ասող լինի — ինչն էր ինձ ստիպում: Հէնց մի բան կը գրէի — սկսում էի յիշոցներ, բամբասանքներ, կռիւ, անբաւականութիւն...... Տէր ողորմեա.

Ախար Քաղցրին ով — քարոզներ ով:
Քաղցրին ով — լրագիրն ու օրագիրներն ով.
Քաղցրին ով — բանաստեղծութիւնն ով.
Քաղցրին ով — ֆէլիետոնիստն ով......
Արի ու մի՝ ասէք, թէ ես առաջ գիժ չէի:

—

Բայց հիմայ ես խելքս հաւաքեցի և ձեզ էլ, ով իմ չարախօս գիժ բարեկամներ, խորհուրդ եմ տալի խելքներդ մտքի ածէք ու գլխներուդ ժողովելով պինդ կապէք, այսպէս թէ ոչ խելքն այնքան թանգացել է, որ ամեն մարդ աշխատում է ուրիշի խելքից մի մասը գողանալ ու...... անխելք բարեկամներին դատարկ գլխով թողնելով այնքան թեթևացնում են, որ իրենց կամքին համեմատ դէս դէն են շպրտում......

Գուցէ դուք ինձ հարցնէք, թէ ինչ կերպով ձեր խելքը պինդ պահէք, որ ոչմինը չը կարողանայ նրանից գողանալ......

Ահա ձեզ իմ խրատը.

Գնեցէք մի մեծ կողպէք ու նրանով կողպեցէք դուք ձեր բերանը՞: բանալին տուէք այնպիսի պարոնին, երբ ուզենայ բաց անէ ու նա ձեզ խօսեցնէ, և երբ ուզենայ կրկին պինդ փակէ: Գնեցէք էլի մի փոքր բամբակ ու երկու ականջներդ էլ նրանով խցեցէք — ոչ մարդու լսեցէք, ոչ պատասխանեցէք. ծածկեցէք վերջապէս մի այնպիսի գտակներ, որ ծածկեն ձեր աչքերն...... ոչ բան կարդացէք, ոչ բան գրեցէք, ոչ բան համեմատեցէք: Կարճ ասեմ, ձեր գլխներից ոչինչ բան դուրս չը թողնէք.... այն ժամանակ միայն աշխարհը կը հանգստանայ ու բոլորովին խաղաղութիւն կը տիրապետէ. ամեն տեղ հանդարտութիւն կը թագաւորէ. ամեն մարդ սիրով ու բաղդաւորութեամբ կ'ապրի...... և վերջապէս այդ ամենահեշտ միջոցով միայն ձեռք կը բերենք խաղաղ կեանք, երջանիկ դրութիւն, ապահովութիւն, փառք.... ահա ոսկէ դար, յառաջադիմութիւն, ահա միակ միջոց լուսաւորութեան......

Ուրեմն, գժեր, խելօքացէք. ձեռք վերցրէք ամեն կռւից ու ղալմաղալից... ով ինչ ուզէ, թող անէ...... ձեզ ինչ է պակասում...... Երբ ձեր բերանը բաց անեն, դուք միայն շողոքորթեցէք, գովեցէք, գրաւեցէք, յայտնեցէք ձեր սրտի սէրն և հոգւոյ համակրութիւնն. ամեն բան հաւանեցէք — ինչ որ ուրիշներն անեն. դուք միայն ասացէք «շատ լաւ է, շատ գեղեցիկ է, շատ պատուական է...... չափազանց համակրելի է...» և դուք անշուշտ կը համնէք ձեր նպատակին, իսկ հասարակութիւն, ազգութիւն, մարդկութիւն...... այդ յետոյ... սպասեցէք:

—

Քիչ էր մնացել, որ էլի գժուեմ.

Ախար առանց իմ ասելու էլ շատ գժեր խելօքացել են...

Նայեցէք՞ ամեն կողմը: Չէ՞ որ առաջ մեր բոլորի չուրջ կային բազմաթիւ չարախօս գժեր, իսկ հիմայ......

Հիմայ ամեն տեղ խաղաղութիւն, ամեն տեղ հաշտութիւն, ամեն տեղ սէր, ամեն տեղ արդարութիւն, ամեն տեղ հրեշտակային վարք, ամեն տեղ եղբայրութիւն, ամեն տեղ........

Ամեն տեղ գժերի պակասութիւն է և խելօքների առատութիւն:

Մարդու հոգին, ճշմարիտն ասեմ, ուզում է թռչել ուրախութիւնից, երբ տեսնում է աշխարհը փոխված. կասես, էլ երկրի վերայ չես, այլ երկինքումը. կասես, Թիֆլիսումը չես, այլ դրախտի մէջ տեղում...

Ի սէր նոր եղբայրութեան, նոր ճշմարտութեան — մի լաւ նայեցէք ու տեսէք:

Հեռացաւ մեզանից կիրքը, ատելութիւնը, խաբէութիւնն ու խաբեբայութիւնն. չը կան էլ աւազակներ ու գողեր, յափշտակող ու զրկողներ....... էլ ոչ մի տեղ չէք տեսնիլ անկարգ բաներ, յիշոցներ, դաւեդարաբայ, կռիւ ու ղալմաղալ...... Այժմ միայն լսում ենք ամենի բերանից հետևեալ խօսքերն. «եղբայրութիւն, միաբանութիւն, սէր, ճշմարտութիւն, գործունէութիւն, բարեգործութիւն... »:

Թէ չէք հաւատում, մտէք մեր քաղաքային վարչութեան խորհրդի ժողով...

Ոչ հին կռիւներ, ոչ հին կուսակցութիւններ, ոչ անհամաձայնութիւն, ոչ անբաւականութիւն ...... ամեն բան կարգով, ամեն բան կանոնով. ամեն տեղ գործ. ամեն տեղ նոր հարցեր ու խնդիրներ...... մին ասեմ — մէկ խօսքով, հասարակական բաղդաւորութիւն: Ժողովը դրուստ պարլամենտի կտորն է. կարգադրութիւնը խօ հէնց նորա սիրտն է. բայց խօսողութիւնը հարցերի մէջն է........ Խօսող ու լսող — որքան կամենաք: Գործող ու մտածող — խիստ բոլ կան: Կատարող ու պահանջող...... էհ, բաւական է...՝ վախում եմ իմ լեզուս էլ այնպէս սլայ, ինչպէս սլացին այդ խորհրդի երկու անդամներ յանուն քաղաքակրթեալ Ֆրանսիայի և այնտեղ ընդունած կարգ ու կանոնի.... Կեցցէ Ֆրանսիան, որի անունով միջոց է գտնվում օտարին դուրս սլացնելու, որ մի ուրիշն տուն սլացնեն......

Ի զուր չէ, որ Ֆրանսիային են հետևում. Թիֆլիսն էլ, կարծես, դրուստ Փարիզ դարձաւ՝ էլ ոչ թոզ, ոչ ցեխ, ոչ կեղտոտ քուչէք. ամեն տեղ փողոցն խտանկ ու մաքուր է, ամեն անկիւնում խտանկ ջուր է բղխում. գիշերը, դրուստ, ցերեկի պէս է — այնքան լուսաւոր, անվրդով ու ապահով...... Քաղաքում ամեն բանի առատութիւն է, ամեն բան արժան. չարամիտ մարդիկ չափազանց քչացան համարեա թէ, բոլորը կորան........ գող ու աւազակ խօ իսկի չը կայ, ամենքն իւրեանց գործով են զբաղված........ Արհեստագիտութիւնը կատարելագործւեցաւ, վաճառականութիւնը յառաջ գնաց. ամենքը բաւական են իւրեանց դրութիւնով. գործ շատ, փող շատ. միայն մէկ բան է պակաս, որ խեղճեր չը կան...... բայց սրանց էլ մեզ Աստուած կտայ...

—

Այս է, իհարկէ, իսկական պատճառը, որ «Тиф. Вѣст.» մեր զուարճախօսն այդ վարչութեան հետ հաշտուեցաւ ու գովել սկսաւ. չէ որ սորա լեզուն առաջ շատ երկար էր: Քաղաքագլուխն էլ, էլ ինչ ասել է ուզում, իւր համակրական զգացմունքը յայտնեց ու շնորհակալութեան մի թուղթ ուղարկեց: Այսպէս քաղաքային վարչութիւնը «Тиф. Вѣст.» խմբագրութեան հետ եղբայրացաւ:

Զարմանալի բան:

Հէնց որ դոցա եղբայրութիւնը հաստատուեցաւ, լրագրի ստենոգրաֆիական հաշիւը չափազանց խանգարւեցաւ......

Ի հարկէ, այդ ընտանեկան բան է, այդ մեր գործը չէ, բայց պէտք է կարծել, որ Պետերբուրգի Թղթակիցը շատ լաւ կ'իմանայ այդ գաղտնիքը: Սա էլ, ախար, չուզեց հեռու մնալ ու նկատելով լրագրերի եղբայրսիրութեան զգացմունքն՝ ինքն էլ կամեցաւ լինել երրորդ եղբայր յանուն միութեան ու ազգայնութեան: Ռուս տեղական լրագիրը չը մերժելով այդպիսի վսեմ առաջարկութիւն, նմանապէս ձեռք մեկնեց, համբուրեց ու ընդունեց այդ միութիւնը:

Տեսնում ես, ընթերցող, ինչպիսի խոհեմութեամբ է վարվում լրագիրն ազգայնութեան ու միութեան խնդիրներում. նա չէ բաժանում ազգութիւններ, չէ զանազանում հասարակութիւններ. նորա համար բոլորը մէկ է... Այսպիսի խոհեմութեամբ վարվեցաւ նաև տպագրելով հանգուցեալ Անտոնովի կենսագրութիւնը, որի մէջ յիշելով, թէ սա տաղանդաւոր վրացերէն հեղինակներից մէկն էր, ոչ մի բառով չասաց, թէ նա ազգութեամբ Հայ էր... Գիտէք ինչու — որովհետև լրագրին չէ հետաքրքրում ազգայնութեան հարցը: Իսկ դու, ընթերցող, եթէ կարդայիր այդ յիշեալ կենսագյորդորեց սիրել խաղաղութիւն և սիրել միմեանց: Այս սէրն ասաց նա պիտի արտայայտուի նրանով, որ ուրախակից լինին իրանց եղբարց ուրախութեան, և ցաւակից նոցա ցաւոց, օգնեն կարօտելոց և աղքատաց և նպաստեն ազգային դպրոցների ծաղկման և յառաջադիմութեան, որոնցից պիտի առաջանան աստուածային պատուէրները ճանաչող նոցա ապագայ սերունդները: Յորդորեց նոյնպէս յարգել և պատուել իրանց հոգևոր հայրերն և հովիւները, իրանց հոգաբարձուներն, գործակատարներն ու ուսուցիչները:

Նորին Բարձր Սրբազնութիւնը յայտնելով, որ ինքն ոչինչով չէ կարող ժողովրդեան ցոյց տուած յարգանքն ու պատիւը փոխարինել, իրան կ'մնայ միայն աղօթել բարերար փրկչին, որ նրան միշտ խաղաղութիւն տայ, զօրացնէ, կազդուրէ, լուսաւորէ, երջանկացնէ և ապագայում երկնից արքայութեան արժանացնէ:

Պատարագի վերջին, երբ Նորին Բարձր Սրբազնութիւնը գնում էր իւր օթեւանը խուռն բազմութիւն ժողովրդեան արք և կանայք և մանկունք մօտենալով առան աջն և օրհնութիւնը:

Մարտի 31ին Սրբազան Մակար Արքեպիսկոպոսը ուղևորեցաւ դէպ Էջմիածին: ժամը 12ին ժողովրդականք սկսան ժողովել առաջնորդարան, իրանց հրաժարականը տալու համար իրանց հովուին, որ 14 տարի խաղաղութեամբ հովուել էր նրանց: Մօտ 1 ժամին Նորին Բարձր Սրբազնութիւնը օրհնեց ժողովրդոց և ելառաջնորդարանից: Բազմաթիւ անձինք կառքերով ուղեկից եղան Նորին Բարձր Սրբազնութեան. քաղաքից դուրս ճանապարհի վերայ եղած պ. Յ. Խարազեանցի այգիում պատրաստած էր ժողովրդականներից հրաժարական հացկերոյթ:

Աւելի քան 120 հոգի ժողովրդեան ամեն դասակարգերից մասնակից եղան ճաշին:

Հանդիսականների մէջ էին տեղական մամուլի ներկայացուցիչները՝ Մեղուի, Тиф. Вѣст.ի խմբագիր իշխան Կ. Բէհբութեանցը և Кавказъի կողմից պ. Ա. Երիցեանը: Բացակայ էր Հայ Մշակը:

Ներսիսեան ուսումնարանի հոգաբարձուներից ներկայ էին՝ պ. պ. Ի. Պօպովը, Ա. Ղորղանեանցը և Հայր Խարազեանցը: (Պ. Գ. Աքիմեանցը հիւանդութեան պատճառով չէր եկած):

Ճաշի ժամանակ պ. Պօպովը ասաց հետևեալ ճառը.

ՁԵՐԴ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ

Այս նշանաւոր օր է Թիֆլիզի բազմահայ հասարակութեան համար, որ ամենայն իրաւամբ է ներկայացուցիչ ընդարձակ թեմին Վրաստանի և Իմէրէթի, որ դուք կառավարեցիք մօտ 14 տարի: Բարձրագոյն իշխանութեան կամօք դուք այժմ հրաւիրած էք գործունէութեան նոր ասպարէզ, որ անշուշտ աւելի նշանաւոր և արդիւնաւոր կը լինի: Հասաւ ժամն երբ մեր սրտերը լի են տրտմութեամբ: Մեր այս դրութիւնը շատ բնական է:

Ճշմարիտ ցաւակցութեանց անկեղծ զգացմամբ բաժանվելով ձեզանից, մենք ակամայ կենդանի կերպով զարթեցնում ենք մեր յիշողութեան մէջ բոլոր այն անյաջող հանգամանքներն՝ որոնցից շրջապատած՝ ստիպուած էիք դուք կառավարելու այս ընդարձակ վիճակը: Հարկ չէ յիշել ձեր նախկին կեանքը մինչև Թիֆլիս գալը. նա պսակուած է խիստ բարուք և անսահման անձնուիրութեամբ Հայաստանեայց Մեծ Լուսաւորչի Սբ. Աթոռին: Յիշենք միայն՝ որ դուք վիճակիս վարչութեան ղէկը ձեր ձեռքն առաք՝ երբ մեր հասարակութիւնը խառնակ վիճակի մէջ էր: Հարկաւոր էր ունենալ փորձառութիւն, համբերութիւն և կամքի հաստատութիւն՝ մտքերը խաղաղացնելու և հաւատարմութիւնը դէպի իրանց հովուապետները վերականգնելու համար: Ժողովրդեան բաղդից հենց այդ յատկութիւններն երևեցան ձեր մէջ, Սրբազան Հայր: Սրա հետ համաձայն կը լինին նոքա՝ որոնք մօտիկ ծանօթ են իրերի վիճակին: Դուք էիք ճարտար ղեկավարն՝ որ երկար տարիներ և անվտանգ կառավարեց նաւը կեանքի կրից և անյաջողութեանց փոթորկալից ովկիանոսում: Դուք միշտ հովուական ցուպը ձեռներիդ առաջնորդում էիք ձեր հօտին անդնդի դիւրահաս եզերքով՝ անդունդի, որոյ յատակում անդադար եռում էին և վրդովվում բազմատեսակ միտեանց հակառակ տարրներ: Ցընթացս այսքան տարիների ձեր փորձառութեան շնորհիւ ոչ ոք ձեր հօտից չընկաւ այդ անդունդը: Բացի սորանից ձեր կարողութեան և ձեզ տուած միջոցների չափ դուք աշխատ եղաք անձեռնմխելի պահել պահպանել ժողովրդեան իրաւունքներն՝ որ շնորհել է նորան մեր սբ. եկեղեցին: Ձեր բոլոր գործողութիւններն աշխատ էք եղել համաձայնեցնել ժողովրդեան կամքին և ցանկութեանց: Իրաւ է՝ կարող էին լինել և դըժգոհներ. ամենքին և իւրաքանչիւրին բաւականացնել կը նշանակէր հակառակել Սբ. Ճշմարտութեան: Նայելով ձեր միջոցներին, պարզապէս պէտք է խոստովանենք՝ որ դուք արիք աւելի՝ քան որչափ հնար էր սպասել:

Արտայայտելով ներկայ հանդիսաւոր րոպէիս կատարեալ անկեղծութեամբ մեր մտքերն և զգացմունքները, մեր սրբազան պարտք ենք համարում յայտնել ձեզ անկեղծ շնորհակալութիւն հասարակութեան կողմից ձեր արդիւնաւոր բազմամեայ կառավարութեան համար այս ընդարձակ թեմի՝ որ շատ կողմանէ ամենանշանաւորն է մեր թեմերի շարքում: Հաւատացէք՝ սրբազան հայր՝ որ եթէ կայ մեր սրտերում մի պահարան մեր կեանքի ամենաթանգագին գանձուց համար՝ ամենընտիր տեղն այդ պահարանումը կը նուիրենք ձեր անջնջելի յիշատակին: Վստահ լինելով ձեր փորձառութեան, հեռատեսութեան և խոհեմութեան վերայ՝ ազգն իրաւունք է իւրան համարում սպասելու ձեզանից դեռ էլի շատ օգուտ, նա կը յուսայ, որ դուք չէք զլանալ ձեր աշխատանքն և ապագայումը նորա համար: Իսկ մեզ կը մնայ վերառաքել առ Ամենաբարձրեալն մեր համեստ մաղթանքը՝ որ պարգևէ ձեզ առողջութիւն և երկար կեանք Սբ. Էջմիածնայ Աթոռի յերեսս երկրի ցրուեալ կարօտ զաւակաց համար:

Սրանից յետ խօսեց պ. Ս. Մանդինեանցը, Ներսիսեան դպրոցի տեսուչն, և յայտնեց Նորին Սրբազնութեան համակրութիւնը դէպի հոգաբարձական հաստատութիւնն և այն, որ թէև գուցէ նորա հեռանալը կարևոր է ազգային գործերի համար, բայց և այնպէս ցաւալի է:

Ա. Նահապետեանցն իբրև տեսուչ Գայիանեան օրիորդական դպրոցի արտայայտեց շնորհակալութիւն այն խնամոց և հովանաւորութեան ու խրախուսութեան համար, որ միշտ տեսել են նորա մէջ գործող երիտասարդները Նորին Սրբազնութիւնից և որով այդ փոքր ձևով սկսած օրիորդական դպրոցը բարձրացաւ միջնակարգի աստիճան և ժողովրդեան համակրութեան առարկայ դարձաւ:

Պ. Յ. Խարազեանցը յայտնեց իւր ճառում այն միտքը, թէ Նորին Սրբազնութեան մօտ գործելով վիճակս անհետացան բոլոր կուսակցութիւնքն, որ վրդովում էին նորա խաղաղութիւնն և թեմն ունեցաւ դըպրոցներ, որք հայախօսութիւն տարածեցին վիրախօս հայերի մէջ և թէ Բեսարաբիոյ վիճակը, որ մի քանի տարի առաջ ունէր գումարներ և դպրոցներ, այժմ խառնակ դրութեան մէջ է, նորա դրամական միջոցները բոլորովին անհետացած են, ուստի նա կարօտ է Նորին Սրբազնութեան նման մի քաջ հովուի գործունէութեան, որ ստեղծէ միջոցներ և դպրոցներ յօգուտ այնտեղի կարօտեալ ժողովրդոց, յայտնելով միևնոյն ժամանակ յոյս թէ անշուշտ Թիֆլիսի հասարակութիւնը կրկին կարժանանայ նրան իւր մէջ տեսնելու:

Պարոն Ղորղանեանցը համակրելով յայտնված զգացմունքներին յայտնեց, որ այնտեղ ներկայ գտնվողները կազմում ամենափոքր մասը այն բազմութեան, որ լի են նոյն զգացմունքներով և որոնք չկարողացան մասնակցել այն հրաժարականին, Նորին Սրբազնութեան անակնկալ հեռանալու պատճառով:

Պ. Երիցեանցը յայտնեց այն միտքը, թէ 50 տարի առաջ Ներսէս կաթուղիկոսը (այն ժամանակ Արքեպիսկոպոս). նըշանակվեցաւ Բեսարաբիոյ առաջնորդ և այսօր Նորին Բարձր Սրբազնութիւնը այնպէս Թիֆլիսից տեղափոխվում է Բեսարաբիա: Նա ասաց, որ Թիֆլիսը գիտէ գնահատել արժանաւոր եկեղեցականներուն և այսպիսի համակրութեամբ ճանապարհ է դցել միայն երկու անձանց՝ Խրիմեան Հայրիկին և Նորին Բարձր Սրբազնութեան:

Պ. Ա. Յովհաննիսեանցը յայտնեց այն միտքը, թէ մեր եկեղեցին ունի ազատ ըսկըզբունք, դէպի որը այլ քոյր եկեղեցիք դիմում են գոհաբերութեամբ. ուստի և առաջարկում է այդ ազատ և փառաւոր եկեղեցու ներկայացուցիչ Վեհ. կաթողիկոսի կենաց և բազմութիւնը համակրութեամբ ընդունեց:

Ապա պ. Ա. Ղորղանեանցը, յիշեցնելով այն հանգամանքն, որ վերջին տարիները մեր Հայերիս մէջ տեղ տեղ երևեցան հերձուածներ եկեղեցւոյ, Վրաստանի թեմը ազատ մնաց կրօնափոխութեան վնասից, որ անտարակոյս պէտք է վերաբերել Նորին Սրբազնութեան արթուն հսկողութեան իւր հօտի վերայ, ուստի առաջարկեց Նորին Սրբազնութեան կենաց բաժակ, որ երրակի կեցցէներով ընդունեց բոլոր բազմութիւնը:

Խօսեցան նոյն մտքով և պ. Ա. Բոտինեանցն ու Մ. Սալամբէկեանցն.

Սրբազան Մակար արքեպիսկոպոսն արտայայտած զգացմունքներին պատասխանեց. „Մինչև 1862 ես վարժած լինելով միայն վանական կեանքում շատ դժուարանում էի մնալ ժողովրդի մէջ. բայց սորա կամքով մտայ և ինչ որ գործեցի, կարող եմ միայն Աստուծոյ շնորհին և նոյն իսկ ժողովրդեան համակրութեան և գործակցութեան վերաբերել, մանաւանդ հայ հասարակութեան ուսումնական մասին, որ երբէք չէ խնայել իւր ջանքն և զոհաբերութիւնը մեր դպրոցների համար:

Այսօրվան արտայայտած զգացմունքներն իմ վերայ քաղցր պարտք են դնում միշտ պատրաստ գտնվելու ազգի և եկեղեցու ծառայութեան համար, համաձայն Աստուծոյ կամքին և հանգամանքներին":

Ճաշից յետ ժողովրդականք կամենալով Նորին Բարձր Սրբազնութեան յիշատակը յաւերժացնել և այն Թիֆլիսի հասարակութեան մէջ անջնջելի պահել, ըստ առաջարկութեան մեծ. պ. Ա. Ղորղանեանցի ստորագրութիւն բացին, որ ժողոված գումարի տոկոսօք պահվին որդեգիրք Ներսիսեան և Գայիանեան դպրոցներում ըստ ընտրութեան Նորին Սրբազնութեան:

Այստեղ իսկ ստորագրութեան գումարը անցաւ 5000—ից: Յարակոյս չկայ, որ այս ստորագրութեան կմասնակցին և այլ շատերն, որոնք զանազան հանգամանքների, ինչպէս և Նորին Սրբազնութեան փաշն անակնկալ կերպով լինելու պատճառով, ներկայ չգտնվեցան:

Այսպէս ճառախօսութիւնների արտայայտած մտքերը պսակվեցան գործով:

Ապա բոլոր բազմութիւնը ուղեկից եղաւ Նորին Սրբազնութեան մինչև կառքը: Այստեղ Նորին Սրբազնութիւնը շնորհակալութիւն յայտնեց ժողովրդեան վերջին երախտագիտական զգացմանց համար և խոստացաւ Ս. Էջմիածնայ Մայր Տաճարի

րութիւնը կարող էիր կարծել թէ այդ տաղանդաւոր Վրաց հեղինակն — ազգութեամբ վրացի էր: Այնպէս էլ միթէ մեկնենք այդ լրագրի վարմունքը, պ. Ն. Ներսէսեանցի մասին: Նա հաղորդելով մի քանի տեղեկութիւններ սորա ծնվելու և պրօֆեսօրութեան պաշտօն ստանալու վերաբերութեամբ, դարձեալ ոչինչ չասաց սորա որ ազգից լինելու մասին… Ճշմարիտ է պ. Սուվորինը կոչում է այդ լրագիրը Հայ լրագիր, գուցէ պ. խմբագրի ազգաւ Հայ կամ խմբագրութեան բաժանորդագիրների մեծագոյն մասի Հայ ազգից լինելու պատճառաւ բայց ինքը լրագիրն այդ հերքեց և ապացուցեց, որ ինքն աւելի մարդկութեան քան Հայութեան է պատկանում:

Եթէ այս պատահէր առաջ, գուցէ մեղադրէին լրագրապետին, բայց այժմ...... այժմ, երբ աշխատակիցներն...... երբ բոլորեքեան մեզ ասում են լռեցէք, ապա թէ ոչ...

Ապա թէ ոչ. ինչ...... վախենալու է. միայն միևնոյն ժամանակ զարմանալու է, որ երկու բարեկամ՝ Тиф. Вѣст. և «Դրօշակ», առաջինն ընդհանուր մարդկութեան և երկրորդն ազգայնութեան պաշտպան են, երկուսի գործակիցքէլ մեծ մասամբ նոյն անձինք են, որ մի տեղ ընդհանուր մարդասէր են և միւս լրագրում թունդ ազգասէր: Տեսնում եմ ընթերցող համոզմունքը նրանց չէ կապում, այլ պօլիտիկական սէրը — բայց պօլիտիկան ասում են խաբէութիւն է, այլ թէ այստեղ ով է խաբում և ով խաբվում, դա մեզ չէ վերաբերում. իրանք գիտեն. ինչ էլի սկսայ գանգատել... լաւ չէ...

Գանգատների ժամանակը թռաւ, անցաւ. այժմ գանգատը նմանապէս ծուռ է... ինչպէս և ծուռ էր մեր քաղաքային հիւանդանոցի գանգատը: Այժմ բոլորեքեանք փոշմանեցան ու խրատուեցան, ամենքը խելօքացան: Ջանքից շատ է հարկէ, հիւանդներն օգուտ քաղեցին. նոցա կերակուրը լաւացաւ, սենեակներն մաքրուեցան, նոցա հետ բոլորեքեան հաշտուեցան ու մեղմացան. ծառաները դարձան ծառաներ, պարոնները — պարոններ ...... ամեն տեղ խաղաղութիւնը թագաւորեց...... Միմիայն բժիշկ Գորալեվիչի սրտում գուցէ սատանի ողմուկ ու չիր է, այդ էլ իրա մեղքն է...

* * *

Մեղքի վերայ խօսեցայ, մեծ պասն յիշեցի... լաւ չէ, որ մեծ պասն անցաւ, պատճառ որ էլի զրուստ ասեմ, երկիւղ եմ կրում ես մեր գըժերից... Ասում են, թէ սոքա պասին միայն խելօքանում են, ուտիսին դարձեալ էլի գըժվում են...

Չէ էլ երկիւղ չը կայ:

Ամեն բանի մէջ, գիտէք, հիմայ կարգ ու կանոն կայ... օրինակ.

Երգեցողութիւնը դիփ խաղերով է,
Վաճառականութիւնը դիփ գրքերով է,
Տներ ու սենեակներ դիփ նոմերով է,
Աշխարհականը — գիտէ թէ ով է.
Տէրտէր, տիրացուն — իրա գլխով է:

Կարճ ասեմ, հիմայ ամեն մէկը մեզանից լաւ է ճանաչում թէ իրա անձն և թէ ուրիշին ...... չէ, էլ երկիւղ չը կայ:

Եղբայրութիւնը մեր մէջ հաստատ հիմք բռնեց, որի ապացոյցը կարող է լինել մեր փոխադարձ վարկի ընկերութիւնը: Այստեղ տեսնում էք, ինչպէս նախանձելի միաբանութիւն, համաձայնութիւն, կարգ ու կանոն է. ամեն անդամ իւր ընկերոջը յարգում ու պատվում է. չը կայ տարօրինակ գործ, ամեն բան լինում է խաթրիչուն, պատճառ որ չեն սիրում կռիւ ու ղալմաղալ......

Մարդու սիրտը միխթարվում է տեսնելով այսպիսի զգացմունք բարեկամական: Անդամների թիւը հազարից անցաւ, բայց հոգին դարձեալ մնաց մէկ, որ շրջում է ամեն մէկի մէջ և ապրեցնում է բոլորին համաձայնութեամբ: Հոգիս, ասացի, միխթարվում է, որ հազար հոգին այդպէս կապուել են — մէկ մէկու համար գլուխ են յետ դնում ու մէկ մէկու համար թրով են կանգնում.

Նախագահ, դիրեկտոր կամ խորհրդի անդամ փորձեցէք տեղերից շարժ տալ — գլուխը հազար մաս կանեն այդ փորձողին, երեսը կը սևացնեն ցանկացողին և չուացնելով դուրս կանեն խիստ պատիժ տալով, թէև մինի ինձ պէս ֆէլիետոնիստ և մինչև անդամ նոյն իսկ խմբագիր...

Ո՞ր անիրաւը չի արդարացնիլ այդ վարմունքը, չէ՞ որ, յիրաւի, պաշտպանութեան արժանի բան է — երբ ընկերին, բարեկամին, ազգականին զրկում, նախատում են...

Ո՞վ կը դիմանայ բարկութիւնից, եթէ տեսնում է ինչպէս ընկեր դիրեկտորին ուզում են զրկել ու 5000 մանէթն էլ նրանից խլել...... միթէ յայտնի չէ, որ ամբողջ տարի դառն աշխատանքով դաղած փողեր են: Հանաք բան խօ չէ շաբաթն երեք օր ստանն ու մէկ ժամից մինչև երկուսը մարդ մի տեղ նստի, սիգարա քաշէ, բոլթայ տայ մէկ սենեակից դէպի միւսը, մասլահաթ անէ այդպիսի տեղում, թըղթեր ձեռք քաշէ մէկ մէկու վերայ... ժամացոյցին նայէ (2-ը լրացաւ) ու շտապէ դէպի տուն...

Ասացի շաբաթ երեք օր... Ներեցէք. ինձ կը խայտառակեն, եթէ իմանան, որովհետև սարսափելի մի սխալ ասացի — մնացած երեք օր թէպէտ ղուլուղում չէ, բայց ղուլուղից դուրս զբաղուած է իրա գործերով... Ֆու...... ...էլի սխալվեցայ— ուզում էի ասել ապրանք է ընդունում ընկերութեան (?!):

Խորհրդի անդամներ խօ խեղճ մարդիկ են. ով հետը խօսի այդ խեղճերի վերայ. ափսոս ամեն բան դրանից վըզին են կապել ու ռոճիկը նշանակել են չափազանց չնչին... էլի խօսում են չարախօսները: Ախար քննեցէք բանը, խիղճ ասացէք. շաբաթը մի գիշեր գալ ու նստել մի ժամ — հեշտ բան էք կարծում, տարին անում է ամբողջ 50 ժամ. Յետոյ...... ռոճիկն ինչ է, կանաչու գին է, ընդ ամենը 2000 մանէթ: Չար լեզուները շատ բաներ կասեն, բայց մի ժամու համար 40 ռ. ստանալ այդ պահանջում է մեր ժամանակի նոր գաղափարը, թէ ամեն բանից ժամանակը թանգ է. Այդ պատճառաւ էլ խորհրդի անդամներից երկուսը շատ իրաւացի կէս տարի արտասահման կացան, բայց ռոճիկը լրիւ ստացան — մի ժամու համար միայն 80 ռուբլի:

Հիմայ խօ հասկացաք... բանը պարզուեցաւ.

* * *

Բանը պարզուեցաւ ընդհանուր ժողովում, որտեղ միութեան հոգին պարզ երևեցաւ. միութեան ընդդէմ միայն երեք անձն եղաւ. երեքից մէկը, զարմանալի բան, հայ էր — այն էլ հեղինակ մի նոր բրօշիւրի, որտեղ յայտնում է իւր հակակրութիւնն ընկերութեան դէմ ու խախտում է զրանով սէրը — միաբանութիւնը... Այդ բաւական չէ. համարձակվում է դարձեալ հրապարակ դուրս գալ ու հաստատում է այդ իւր կարծիքը... Որպիսի յանդգնութիւն: Գիտէք, ով էր այդ վեհանձն պարոնը— մեր հռչակաւոր փաստաբան Ջաբարովը, որ փաստաբանական հմուտ ճարտարութեամբ ամենքի ուշադրութիւնը դէպի իւր քաղցրահնչիւն լեզուն հրաւիրեց և սկսաւ խօսել, բայց լեզուն կապուեցաւ ... Ներկայացրէք այժմ սորա դրութիւնն, երբ հազարաւոր ձայներ «բաւական է, բաւական է» գոչում են. ... ինչ կուզէք ասէք, բայց... լաւ պատժուեցաւ:

Եթէ պ. Ջաբարովը պատժուեցաւ ճարտարութեան համար — Պալբեկն էլ պատժուեցաւ անճառութեան համար. թէպէտ սա երկար չխօսեց, բայց մի վիրաւորական խօսք նրան էժան չը նստեց... Եղբայրակից մեր պարոններն այնքան այս բառը կրակի վերայ դրին, որ խորուած ձուի պէս էլի յետ խլշտեց սխալված պարոնը: Թէպէտ երկուսին ամենքը պատժեցին, բայց զօրաւոր վրէժը հանեց երրորդը — Խվօսենկօն, որ ամենքին պատժեց, սա նրանց խօսքը զրուստ տասը ժամին ու վերջացրեց ուղիղ չորսին... մեղայ Աստուծոյ... ոչ թէ վերջացրեց, այլ յետաձգեց մինչ միւս կիւրակին: Ահա լաւ պատիժ միութեան համար, որ խակոյն խախտեց ու տնէ տուն ցրուեց...

Ընթերցող, դու մի զարմանայ մեր ընկերութեան այս միահոգութեան ու սիրոյ վերայ.... Բագուի ընկերութիւնը սրանից առաւել միաբանութեամբ է կապուած. այնտեղ ամեն մէկը պաշտպանվում է ու պաշտպանում. ամեն մէկը գլուխ է ջարդում իւր եղբայրակից — կուսակիցներով. թէ մի անձն համարձակվում է ասել, որ նախագահը տարուայ միջոցում երեք օր միայն եղել է ընկերութեան մէջ, բայց ռոճիկը ճշդիւ ստացել է կանխիկ... (ախար նախագահ—Բէնկէնդորֆը շատ բարկացող իրաւաբան է) իսկոյն սա հրամայում է դահլիճից հանել այդ անիրաւ զրպարտող մարդուն, որ իրաւաբանն իրաւունք ունի չը նստել դոցա պէս մարդկանց մօտ, խօսելու արգելել: Զարմանում եմ միայն, թէ ինչու պ. Բէնկենդորֆը մրաւորը մոռացած մնել է ժողով, որտեղ անդամները յանդգնել են զարմանալի համակրութեամբ պ. Կամպանսկուն ընտրել նախագահ... Պարոն Կամպանսկին եթէ իմանար, որ Բէնկենդորֆը մի նոր հերոս է, ի հարկէ չէր համաձայնի նախագահ լինել... Հաւն է, ուրեմն, պ. Կամպանսկու, որ ժողովը բարձրաձայն ղըղրդոց հանեց ու խայտառակ կերպով նրա ձայնը կտրեց:

Հիմայ ինչ պիտի անէր նոր նախագահը. ժաառաջ, պօլթել ամենցուն համար առանձին առանձին և անջնջելի պահելոց յիշատակը իւր սրտի խորքերում: Ոմանք ուղեկից եղան Նորին Սրբազնութեան կառքերով և ձիաներով մինչև առաջին իջևանը: Պարտք ենք համարում յայտնել շնորհակալութիւն պ. Ա. Յովհաննիսեանցին, որ նոյն օրվայ հացկերոյթի կառավարիչն էր:

Խմբագրութիւնս ստացաւ «Դպրոց» ամսագրի 5 տետրն և Խորէն վարդապետ Ստեփանէի «Հայկական Աշխարհի» Յունվար և փետրվար ամիսների համարները մի տետրի մէջ ամփոփած.

«Դպրոցի» 5 համարի մէջ կարդում ենք մեր աշխատակից մեծ. Տիկին Ս. Բաբայեանցի յօդուածը մանկական պարտէզների մասին.

ՆԵՐՔԻՆ

ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ.

Մարտի 28ին փոխադարձ վարկի ընկերութեան երկրորդ նիստը եղաւ նախագահութեամբ պ. Ա. Ս. Ղորղանեանցի:

Այս անգամ ժողովը պարապեց քուէարկութեամբ միայն:

Դեռ առաջարկվեցան չորս հարց, որոնք վճռվեցան հետևեալ կերպով:

1. Հաստատե՞լ առաջիկայ տարուայ նախահաշիւը թէ ոչ: Բազմութեամբ 325 ձայնից ընդդէմ 54ի վճռվեցաւ՝ հաստատել:

2. Հաստատե՞լ անցեալ տարուայ հաշիւը և եկամտից բաժանումն թէ ոչ: Բազմութեամբ 316 ձայնից ընդդէմ 63ի— հաստատել:

3. Խորհրդի անդամոց թուին աւելացնել երկու նոր անդամներ թէ չորս առանց աւելացնելու սորա համար նոր ծախք: Բազմութեամբ 242ի ընդդէմ 137ի վճռվեցաւ աւելացնել 2 հոգի ևս:

4. Վերաբերութեամբ 23 անձանց առաջարկութեանց կազմե՞լ մի յանձնաժողով թէ բաւականանալ խորհրդի բացատրութեամբ: Բազմութեամբ 259 ձայնից ընդդէմ 120ի որոշվեցաւ բաւականանալ խորհրդի բացատրութեամբ:

Յետոյ խորհուրդը դիմեց պաշտօնատար անձանց և քննողական յանձնաժողովի անդամոց ընտրութեանը:

Հերթով դուրս եկող դիրեկտոր պ. Ա. Թ. Փրիդոնեանցին ժողովը միաձայն առանց քուէարկութեան նորից ընտրեց իւր պաշտօնին:

Երկու հերթով դուրս եկող խորհրդի անդամոց՝ պ. պ. Ա. Յ. Մանթաշեանցի և Ս Ջաւէլու տեղ և երկու նոր անդամոց համար առաջարկվեցան տասն և մի կանդիդատ: Ահա նոցա անունները և ստացած քուէները.

Պ. Փուղինեանց Գ. Յ.	264 սպիտ.	61 սեւ
„ Տուրինեանց Գ. Յ.	110 —	215 „
„ Ղորղանեանց Յ. Ս.		
„ Թամամշեանց Զ. Գ....	107 —	218 „
„ Մանթաշեանց Ա. Յ.	264 —	61 „
„ Պօլուխանեանց Մ. Ե.	116 —	209 „
„ Մելիք Ղարաւեզով Պ. Գ.	210 —	115 „
„ Էլիմիրզեանց Լ. Կ. ...	89 —	236 „
„ Արծրունի Գ. Ե.	83 —	242 „
„ Ջաւէլի Ս. Ի.	245 —	80 „
Իշխան Երիստով Գ. Գ.	103 —	222 „

Սոցանից ընտրուած հրատարակվեցան պ. պ. Մանթաշեանց, Փուղինեանց, Մելիք Ղարաղեօզեանց և Ջաւէլի:

Քննողական յանձնաժողովի անդամոց համար քուէարկվեցան եօթն անձինք:

Սորանից յետոյ պ. նախագահը գոցեց նիստը:

Тифл. Вѣст.ը հաղորդում է, որ Թիֆլիսի ուսումնարաններից մէկում տեսուչը խօսում է աշակերտների հետ միշտ վնասակար վարդապետութեանց մասին: Չէ կարելի ժխտել օգուտն այս խօսակցութեանց աշակերտաց հետ, նոցա ընտանեկան կեանքի, նոցա կարդացած գրքերի, նոցա յարաբերութեանց և այլն մասին: Այդ խօսակցութիւնքը կարող են առաջն առնել վնասակար վարդապետութեանց. միայն ցանկալի էր, որ նոքա կատարվելիս լինէին ազատ ժամերին և պ. տեսչի չափազանց եռանդը չխլէր ուսանողներից դասերի ժամանակը: Աչքի առաջ ունենալով տոների շատութիւնն, ուսումնական տարուայ կարճութիւնն և ուսմանց առարկաների շատութիւնը պէտք է խնայել ամեն մի բոպէն:

—

Միօրական ժողովրդագրութիւնը Թիֆլիզում դարձաւ շաբաթական, բայց այդ էլ չօգնեց. ժողովրդագրութիւնը շատ անբաւարար անցաւ՝ մեծ տներ իւրեանց բոլոր բնակիչներով մոռացութեան տրուեցան. Մի քանիսն արդէն տպագրութեամբ յայտնեցին այդ մասին, բայց թէ որքանը մնացել են անյայտ — այդ թող բարեհաճեն հետազօտելու նոյն իսկ ժողովրդագրողները: Սոքա գտել են և այս միջոցը. յայտարարութեամբ հրաւիրել են ժողովրդագրութեան չարժանացողներին՝ տպագրութեամբ յայտնել այդ և ուղղել գործում եղած սխալները: Բայց մոռացել են յայտարարողներն այն հանգամանքը, որ հասարակ ժողովուրդն ոչ կը կարդայ նոցա յայտարարութիւնն և ոչ էլ կը ցանկանայ նպաստել նոցա գործին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵՇԵԴԻՍԵՐ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի):

—

Մեշադիսերը մի պարսկական գիւղ է ընկած Կասպից ծովի հարաւային ափումը: Այդ գիւղը նշանաւոր է նորանով, որ ծառայում է ինչպէս յարակցութեան կենդրոն Սարի նահանգի ու արտասահմանի տէրութիւնների: Դրամբաբուլ կոչված գետի բերանումն կանգ առնում են այն նաւերն ու շոգենաւերն, որոնք լցուած են լինում արտասահմանի արտադրութիւններով: Բաբուլը, որ գիւղի միջով անցնելով՝ նրան երկու թաղ է բաժանում, արտադրում է բաւական մեծ քանակութեամբ ձկներ:

Տեղի դիրքը հարթ է. անսահման տարածութիւնը ծածկուած է թփերով. ծառերով և տեղ տեղ էլ ճահիճներով: Մի կողմից մարդու աչքին ընկնում է ծովի հարթ մակերևոյթը, որ յաճախ հիւսիսային քամուց կատաղում, փրփրում, ու երբեմն էլ իր ահագին ալեքների մէջ կուլ է տալիս նաւեր: Այդ ալեքներն են, որ հայ վաճառականներից շատերի նիւթականը կլանելով՝ ձեռները ծոցներում են թողնում: իսկ միւս հակառակ կողմից մարդու աչքի առաջև, անտառների բարձրածայր ծառերի միջից, հպարտութեամբ բարձրանում է այն բարձր ու ձիւնապատ Դեմավենդի գագաթը, որ երբեմն իր ահագին կոկորդը բացած, կրակ ու մոխիր էր դուրս տալիս իր փորից ու զարհուրանք պատճառում՝ կրակապաշտ ժողովուրդին: Բայց այժմ դա ևս կարծես յաղթվելով Մահամեդի ղուրանի քարոզութիւններից, թողել է իր ժայթքումն և ընդունել մի աւելի փառաւոր դիրք ու գեղեցիկ տեսք, որ զմայլեցնում է ճանապարհորդներին:

Բնութիւնը կարծես իր բոլոր ոյժերը գործ է դրել, որ ինչ է Պարսկաստանի այցելողին հիացնէ իւր ճոխութեամբ: Մի տեղ լիմոնի, նարինջի, թուրինջի, նարնջի, բադրանգի, թզի, ակրկևալի ու միւս ծառերը, միւս տեղ կանանչազարդ նռնենու, մորի, խաղողի և ուրիշ տեսակ թուփերը, գոյն զգոյն ծաղիկները մարդու աչք են շլացնում: Այդ կանանչ դաշտերում զբօսնողի լսելիքին անդադար հանգստութիւն չեն տալիս նաշխուն թիթեռնիկները, բզէզները, մորեխները, ճպուռները, գորտերը, որոնք իրենց ճռոցը, բզզոցը, ծլծլոցը խառնելով ծովի ալեքների դռոցի հետ, մի խառնաշփոթ ձայն են կազմում: Պակաս սարսափ չեն բերում թոյլ կազմուածք ունեցողներին ու վախկոտներին այն սև կանանչագոյն ջրի օձերը, որ ամեն մի քայլափոխում սողում են մարդու ոտերի միջով կարծես օձերի թագաւորութիւնն այդ տեղ է: Զբօսնողն այդ բազմակողմանի տեսարաններն, ձայներն իր գլուխը լցրած գալիս է իր օթևանը հանգստանալու, և ահա մթնեց: Մթնելոյն պէս բնակարանի չորս կողմում լսւում են լացը, ճըղոցը, հաչիւն, ոռնոցը, որ արտայայտվում են երբեմն և երբեմն շատ բերաններից: Անփորձ մարդը առաջ մի սարսափ է զգում. նա կարծում է, որ մոլեռանդ Պարսիկներն են ժողովել բնակարանի շուրջը իրեն մի որևիցէ վնաս հասցնելու. բայց երբ դուրս է գալիս սենեակից ու ձայն տալիս. „այդ ո՞վ է", խորին լռութիւն է տիրում և նա ոչինչ պատասխան չստանալով՝ հասկանում է, որ այդ աղմկարարները մի տեսակ չորքոտանիներ են, որոնց տեղացիք անվանում են „Չախկալ": Բացի չախկալները, պակաս աղմուկ չեն հանել տալիս և վայրի կատուները մտնելով՝ տնային հաւերի, սագերի ու բադերի խմբերի մէջ:

Չնայելով բնութեան այդ ճոխութեան, Մեշադիսերին պակաս է մի բան, այն է առողջ կլիմայ: Մի կողմից ծովի գոլորշիքը, միւս կողմից ճահիճների գարշահոտութիւնը և երրորդ կողմից անտառների խոնաւութիւնը տալիս են անառողջ յատկութիւն: Օդը մինչ այն աստիճան խոնաւ է, որ անկարելի է լինում այդ տեղերում մրգեղէնները չորացնել, շորերը, գրեանքը, եթէ մի կամ երկու օր ձեռք չտաս, ծածկվում են կանանչագոյն բորբոսով: Սրա վրայ աւելացրու և եղանակի յաճախակի փոփոխութիւնը. գիշերուայ Դեմաւենտի ցուրտ և ցերեկուայ ծովի տաք քամին, այն ժամանակ աւելի լաւ հասկանալի կը լինի այն ջերմի (տենդի) ազդեցութիւնը, որին ենթակայ են լինում նոյն իսկ բնիկ Պարսիկներն: Ասածիս ապացոյց են բնիկների դեղնած դէմքը ու թոյլ կազմուածքը. այդ տեղ, ամբողջ գիւղում, չէք պատահել ոչ մի կարմրադէմ առոյգ ու առողջ տղամարդու: Այդ օդում, առաւել ամառն, անկարելի է լինում մրգեղէն ուտելն, վասնզի ուտելոյն պէս մարդ զգում է նրա վնասակար ներգործութիւնը՝ սաստիկ ջերմ: Պէտք է ասած, որ ինչպէս առհասարակ տաք երկիրներում, տարին որոշակի չէ կատարում իր չորս եղանակը: Մեշադիսերում սաստիկ տաքութիւնից յետոյ սկսվում են անձրևային հով օրերն, որից յետոյ էլի գալիս են տաք օրերը: Միայն երկու փոփոխութիւն է լինում: Բայց վերջին երկու տարիներում կարծես եղանակը սկսում է աւելի բարեխառն կլիմայի նմանել. ձմեռը, ինչպէս այս, նոյնպէս և անցեալ տարի, ձիւնախառն էր, բաւական ցրտութեամբ: Բացի բնիկների վատ օդի ենթակայ լինելը, նրանք նոյնպէս ենթարկուած են ամառ ժամանակ անառողջարար ջրերի ներգործութեանցն, այդ եղանակին ջրերը որդնոտվում են:

Հողագործ—Զօկ.

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

«Тиф. Вѣст»-ին հեռագրում են Պետերբուրգից, որ այնտեղի Հայոց եկեղեցւոյ աւագ քահանայ Տէր Գրիգորեանցը (Տէր Գրիգոր հայրը)

ժողը նորան ընտրեց նախագահ, ժողովն էլ արտաքսեց. մնաց սորան մէկ բան, որ ամբիոն բարձրանայ ու զայրացած ամբոխին էլ զուռնայ փչէ. Զուռնան նշան էր, թէ ժողովը ծածկեց... Աբա ո՞վ է լսել ժողովը ծածկել, մինչև որ չէն ընտրուել այն մարդիկ, որոնք ամբողջ տարի աշխատ են եղել լինել նախագահ բանկի, կամ դիրեկտոր ընկերութեան մէջ. ժողովը չը լսեց զուռնայի ձայնը, նախագահի հրամանն անկանոն համարեց, շարունակվեցաւ նոր նիստ և յանժամ կանոնաւոր ընտրութիւն եղաւ — ընտրվեցաւ իսկական նախագահ ժողովի(?) Ադամովն էլ դիրեկտոր(?): Հիմայ ասացէք, պարոններ, թէ մեր հռչակուած իրաւաբաններն ու փաստաբանները չեն պաշտպանում մեր իրաւունքն և հասարակութեան շահն. էլի խօսում էք, թէ փաստաբանները շահասէր և փողի համար պատրաստ են ծախել թէ իւր ընկերոջ և թէ իւր խիղճը...

—

Ահա տեսէք այժմ եղբայրակցութիւնն երևեցաւ և Հայ գրականութեան մէջ. էլ չը կայ, տեսնում էք, Մշակի ու Մեղուի մէջ հին թշնամութիւնը, ատելութիւնը: Ներկայ տարուայ սկզբից զարգացաւ կուսակցութիւնն ու կիրքը. Մշակի թերթերում էլ երբէք չէք տեսնիլ «Մեղու» անունը. Այլ ևս չէք գտնիլ Մեղուական ու Մշակական անձնիք. փարատեցան տարակուսութեանց բոլոր պատճառներ... այս ամենը, չէ՞ որ, սիրոյ նշան է... երկու կողմից էլ բարձրացան հաշտութեան դրօշակներ:

Միմիայն իմ եղբայրակից (ամօթ է ասել) Ասիացին, ուզում է քար խառնել այս հաշտութեան մէջ ու չարախօս լեզուն խիստ է գործ դնում. ի՞նչ անենք, կան մարդիկ, որ առանց կռուի ու բամբասանքի չեն կարող ապրել, ինչպէս առանց հացի. Նա հնարում է սուտ ու մուտ բաներ, որ Մշակի խմբագրի վարկը վայր ձգէ...

Մազերս ճշմարիտ բիզ բիզ են կանգնում, երբ միտս է գալի, թէ չարախօս Ասիացին ինչեր է հնարել ու ինչ է տարածում... Լսեցէք, պարոններ, թէ յանդգունն Ասիացին ինչ է լըսել իրապէս չարալեզու մի ոմն պարոնից ու չաւ է անում ամբողջ աշխարհում.

Ահա նորա խօսքը.

«Մշակի խմբագիրն իր մի քանի առաջնորդող յօդուածները գրում է ո՛չ թէ իր ներքին համոզմունքից դրդուած, — այլ օտար ձեռքով վարձուած լինելով....

Այս բաւական չէ, էլի աւելացնում է, թէ «Ասում են, որ նա (Մշակի խմբագիրը) Բիսմարկից փող է ստանում...»:

Լսեցիք, պարոններ... Հիմայ դատեցէք, թէ որպիսի անձն է այս Ասիացին, որ հաւատացել է այս յիմար, զզուելի բանին...

Ախար Բիսմարկ... Մշակ... որտեղից որտեղ. Թէպէտ յայտնի է, որ Մշակը Բիսմարկին շատ է հաւանում ու պաշտպանում, բայց որ Մշակի խմբագիրն անձամբ ծանօթ լինի Բիսմարկի հետ, այդ ո՞վ կը հաւատայ... Ո՞ր խելօք մարդը կասէ, թէ Բիսմարկին յայտնի է Մշակի գոյութիւնը... Բիսմարկն էլ, էլ ինչ Բիսմարկ է, երբ Մշակն է դառել նրա բանն ու գործը....

Չէ, իմ պաշտօնակից Ասիացի եղբայր, ձեռը վեր կալ չարախօսութիւնից. չէ՞ որ ես հենց սկզբից ասացի, որ մի անգամ ես էլ չարախօս էի, բայց զգուշութիւնից վաղուց ձեռք վերցի....

Գուցէ պ. Ասիացին այդպէս խօսելով ուրիշ նպատակ է ունեցել... որ հասկացնէ իւր ընթերցողին, թէ Բիսմարկը կարդում է «Մշակ» ու համակրում է... Աբա ինչ լայեղ բան է.... երբ մշակականներն աներևութացան:

Բայց ես կարծում եմ, որ այդ էլ չէ պատճառը. պատճառը միմիայն այն պիտի լինի, որ խեղճ Ասիացին Հայոց վերջին թատրոն է գնացել, որտեղ անչափ զզացմունքներ զիզվել են նրա սրտում և այդ բոլորը նա ամփոփել է... յետոյ դրանից հիւանդացել է... ախար ինչ անէ, շատ «նեժնի» մարդ է. ամեն վատ զգացմունք նրան գրգռում է ու շփոթեցնում է: Ուրեմն իսկական պատճառը հիւանդութիւնն է և ոչ թէ հաստատ աղբիւր — գրողներ, մանկավարժներ ու հոգևորականներ...»:

Եթէ Ասիացու այդ «հաստատ աղբիւրն» էլ այնպէս հաստատ է, ինչպէս այս լուրը... ես եմ ցաւում խեղճ Մշակի վրայ, ո՞ւր մնաց Բիսմարկը...

—

Իսկ որ պ. Ասիացին Թատրոնի պատճառաւ հիւանդ պառկած էր, այդ հաստատ բան է. ես հաւատում եմ, որովհետև միայն Ասիացին չէր, որ հիւանդացաւ Հայոց թատրոնում, այլ կային շատ նեժնի մարդիկ, որոնք չը դիմանալով թատրոնի խաղին, թողին դուրս եկան, ցրուեցան տները, բայց երազումը դարձեալ նոյն թատրոնը տեսան... քունը կոտրեցին, ամբողջ գիշերը (ինձ միայն պատմեցին) շուռ ու մուռ եկան... Յետոյ մի փոքր էլի աչքը խփեցին, բայց դերասաններն էլի առաջ եկան. միայն մարդիկ չէին այս պարոններն, այլ աքաղաղ, հաւ, հնդուհաւ, ձի, ուղտ, գոմէշ, կով, եզ... բոլորը պալատական հագուստով հագած և ծիծաղելի բան... սոքա աւելի զուարճալի են այս մեծ պասին երազում քունը կոտրածներին, քան թէ թատրոնում նոյն իսկ ընդունակ դերասանները, որ այս կենդանիներին շատ նման էին...

—

Լրագիրները թողնենք, արդէն հաշտուեցան. Տաք հարաւը փորձեց նմանապէս հաշտուել ու եղբայրանալ սառն հիւսիսի հետ. Հարաւը յղի է և պիտի ծնի մի մանուկ տղայ, որի անունը «փորձ» է կնքած. Հիւսիսն էլ պատրաստ է մկրտիչ դառնալ ու ընծայ է բերում ոսկեայ մի «Լուման»:

Ահա սիրոյ էլի մի նոր օրինակ... Երկու հեռի աշխարհներ — միմեանց ձեռքեր մեկնեցին ու սիրալիր համբոյրն ի նշան եղբայրութեան դրոշմեցին:

Երկու եղբայր «փորձ» ու «Լուման» — երկուսն էլ մանուկ դեռ չը ծնած, բայց արդէն փորձած ու քաջութեամբ լի—մեզ ընծայում են երկու ամսագիր:

Ես վախենում եմ.

«Ամսագիր» խօսքը միայն բաւական է մեր սարսափների մէջ սարսափ գցելու... թէ այս գծերն էլի գծուեցան — ես դալի չունեմ — Հիւսիս ու հարաւ տակն ու վրայ կանեն.... Լուման կը գցեն մի տիկճորի մէջ ու կը խեղդեն կախեթու գինում. իսկ փորձը կը շարեն մի չամիչուրի վրայ ու կը փորձեն դարձնել մի խորված սուկի..

Ես գիտէք, ինչու:

Ախար, յայտնի բան է, Լուման էլի մեզնից փող կուզէ. «փորձն» էլ մեզ խօ պիտի փորձէ.. ... Չէ, այդ մեր բանը չէ. առանց փորձի էլ մենք շատ փորձուած ենք, մեզի փորձն էլ հարկաւոր չէ: «Փորձը» դեռ ինքն անփորձ է:

Ուրեմն միամիտ կացէք, ով անփորձ գծեր, փորձողն ինքն անփորձ է. եթէ գիտենայ որքան ապառիկ մինչեւ հիմայ մնում է Մեղուի բաժանորդների մօտ, անշուշտ «փորձի» տեղ իւր ամսագրի անունը «նիսիայ» կը դնէ և այն ժամանակ, դուք հանգիստ եղէք, նա ձեզ փորձանքի մէջ գցելու փոխանակ, դուք նրան կը գցէք...

—

Ահա ձեզ ապացոյց, որ «փորձը» անփորձ է. կարդացէք «Тиф. Вѣст.»-ի մէջ պ. Աբգար Յովհաննիսեանի նամակը (հէնց սա պիտի ծնի այդ մանուկ «փորձին») դուք կը համոզուիք այդ կարծիքի մէջ:

Ամենքը գիտեն, որ միօրական ժողովրդագրութիւնը միմիայն մի փորձ էր... Թէպէտ մի օրուայ փոխանակ երեք օր շարունակվեցաւ բայց էլի չափազանց յաջողուեցաւ: Իսկ պարոն Յովհաննիսեանը դարձեալ անբաւական է, որ նորա տունը մոռացուել է. ախար չէ՞ որ նա ինքն է ասում, թէ նորա տուն գնում են առողջութեամբ կամ փողով խախտուած մարդիկ՝ ուրեմն ինչու վրդովվել է պ. նամակագիրը և ինչու գնար նրա տուն ժողովրդագրող հաշուատեսը, երբ սա, երևի, ոչ խախտուած առողջութիւն, ոչ խախտուած գրպան ունէր......

Մեր տան մօտ էլ կայ էլի մէկ տուն, որտեղ գալիս են մարդիկ գրել, կարդալ ու հաշիւ սովորելու և շատ լաւ արաւ պ. հաշուատեսն, որ եկաւ այնտեղ, որովհետև գրել սովորեց, թէպէտ հաշվումն էլ երկուսին թողեց, բայց սխալն ուղղելու համար մի ընտանիքը չորս անգամ գրեց...

Ասած է, մարդը չի խրատուիլ, մինչև չը փորձուի. փորձի համար շատերը մեռնում են, շատերի գլուխն ենք պատռում ու աչքն ենք հանում... հէնց այս կանոնին էլ հետևել են մի գեներալ ու մէկ էլ պոլկովնիկ, որ խեղճ հաշուատեսին իրանց տուն չեն թողել ու փայտով այնտեղից դուրս են քշել... Այս լաւ ապացոյց է, որ ժողովրդագրութիւնը շատ յաջող է...

—

Բայց դու ընթերցող մի նեղանալ, որ իմ լեզուս փոխեցի ու խելօքացայ: Ահա եկաւ զատիկը՝ Քրիստոսի Յարութիւնը, որ խզում է ամեն կապանք և յարութիւն տալիս մեռելներին: Դա կը խզէ և իմ բերանիս կապանքըն, ու ես էլի կը սկսեմ իմ նախկին ընթացքըս և կը խօսեմ քեզ հետ իմ ազատ լեզուովս, գիտեմ զգուշութիւնը քեզ աւել է դուր գալի քան խելօքութիւնը, որ, ինչպէս ինքս էլ տեսնում եմ ֆելիետօնիս, ինձ էլ չէ սազ գալիս:

Փաղքցի.

ի Թաղման յուղարկաւորութեան ժամանակ մարտի 28-ին յանկարծակի վախճանեցաւ։

—

Հաւատացնում են հաւատարի աղբիւրներից, որ հակառակ հրամանքի՝ սուլթանի մի քանի անգրագէտների փոխարէն նոցերի պատասխանների ամենայն պատրաստականութեամբ գրելու, դորա համար փող են պահանջել Հաւատամնք թէ ոչ։

—

Լրագիրներում կարդում ենք, որ Սուլթան Աբդուլ Ազիզը պատուիրել է Հայոց և Յունաց պատրիարքներին, որ աղօթեն Տաճկաստանի դրամական վիճակի բարելաւութեան համար:

—

Եգիպտոսի Տէրութիւնը վճռել է յետաձգել երեք ամսով գանձարանի պարտաթղթերի տոկոսների վճարը։

—

Ռուսաց կայսերական ընդհանրական գրադարանը, ինչպէս յայտնի է, ուրիշ հազուագիւտ ձեռագրերի հետ միասին ձեռք է բերել երևելի Ղուրանը, որ գրուած է Օսմանի ձեռքով, որ երրորդ ամիրապետ է Մահմետից յետոյ։ Այդ երևելի գիրքը, որ գոյութիւն ունի 1,200 տարուց աւելի, բաւականին լաւ պահպանուել է։ Սմրղանդի Ուլեմները դորան կոչում են «Ջոհի գրիչ»։ Թէ ինչից է առաջացել այդ անունը, նոքա չեն կարողանում բացատրել. Աւանդութիւնն ասում է, որ Օսմանը զբաղուած էր այդ Ղուրանի ընթերցանութեամբ՝ երբ նորա վերայ յարձակուեցան մարդասպանները և դաշոյնը խրեցին նորա կուրծքը, Նորա արեան շիթերը ներկեցին Ս. Գրքի թերթերը, որոց հետքը մինչև այժմ բաւականին պարզ մնացած են։

—

Բոմբէի «Freind of India» լրագիրը հաղորդում է, որ Օուդի թագուհի Շանդան վախճանել է. սա ստրկուհուց դարձաւ ամենազօրեղ թագուհի։ Նա մտաւ իբրև ստրուկ Վաջդ—Ալի թագաւորի հարեմը, որ թէպէտ ունէր 1000ից աւելի գեղեցիկ հարճեր, բայց այնպէս գրաւեց նորան գեղեցկութեամբը, որ ամուսնացաւ նորա վերայ և կարգեց թագուհի։ Երբ 1857 թուին Ալի թագաւորն ապստամբեցաւ Անգլիացւոց դէմ, յաղթուեցաւ, գերի ընկաւ և թագաւորութիւնից զրկուեցաւ, այն ժամանակը Շանդա թագուհին ստիպուած էր իւր ամուսնական կապը խզել իւր ամուսնու հետ և աքսորուել իւր տէրութեան սահմաններից։ Նա երկու անգամ մորգանտիք ամուսնական կապով միացաւ երկու հնդկական իշխանների հետ, որոնք երկուսն էլ մեռան նորանից աւելի շուտ։ Շանդա թագուհին որդի չը թողեց, բայց թողեց մեծ ժառանգութիւն. մօտ 7 միլիօն մանէթ, որին իբրև ժառանգ հանդէս են դուրս գալի անգլիական կառավարութիւնն և նորա նախկին ամուսին Վաջդ—Ալին, որ տակաւին կենդանի է։

—

Լրագրերը հաղորդում են, որ մօտ ժամանակներս Սան Ֆրանցիսկում հրապարակական աճրդախօսութեամբ վաճառվում էին 16 Չինացի կանայք։ Գնել կարող էին միայն Չինացիք։ Ամենաբարձր գինն, որ նշանակած էր այդ կենդանի ապրանքներից իւրաքանչիւրի համար էր 10 ռ., իսկ ամենափոքր գինը 80 կ.։

—

Ջեմս—լիկ անունով մինը Սան—Ֆրանցիսկոյից փարիզումը պատուիրել է շինելու մի աճագին հեռադիտակ, որ պէտք է դրվի Սիերրա — Նեվադայի լեռան գագաթում, որ 10,000 ոտնաչափ բարձր է ծովի մակերևութից։ Հեռադիտակի մեծ ապակու տրամագիծը լինելու է 4 մետր և առարկաները մեծացնելու է 28,000 անգամ։ Այդպէս լուսինը կերևայ միայն 7 վերստ հեռաւորութեամբ երկրից, իսկ Մարս մոլորակը 100 անգամ աւելի մեծ կերևայ լուսնից, ինչպէս տեսնում ենք սրան հասարակ աչքով։ Այդ հեռադիտակը կը նստի մի միլիօնից աւելի մանէթ և պատրաստ կը լինի 5 տարուց յետոյ։

—

Լիբերբրատեչի և իւր ընկերների կալանաւորութիւնը մեծ շարժ ձգեց այն նահանգների մէջ, որտեղից նորան անց էին կացնում։ Ամեն տեղ նորան դիմաւորում էին ամենաջերմ համակրութեամբ և ճրագալուցութեամբ, այնպէս որ Աւստրիական կառավարութիւնը շատ ուրախ չէր նորան կալանաւորող նահանգապետից, որ իւր չափազանց ջերմեռանդութեամբ, միայն աւելի վնասեց Աւստրիային, ըստ որում Լիբերբրատիչն երևան է գալի ամէն ուրեք իբրև հայրենեաց պաշտպանութեան նահատակ, որին իբրև դահիճ հանդէս է գալիս Աւստրիան։

—

Տաճիկների և Հերցոգովինայի ապստամբների մէջ կայացաւ չորս շաբաթուայ զինադադարումն ապագայ բանակցութեան համար։

═

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Առ մեծապատիւ Գրիգոր Արծրունին

Պ. ԴՈԿՏՕՐ։

Լսեցի, թէ դուք դժգոհութիւն էք յայտնել իմ մասին, թէ ես մէկին կամ միւսին հաւատացուցել եմ, իբր թէ դուք օտարներից կաշառուած լինելով՝ բիւրիական ընկերութեան մասին յօդուած էք գրել։ — Արդեօք դուք կաշառուած էք, թէ չէ…… այդ յայտնի է Աստուծոյ. ինձ դեռ յայտնի չէ, ուստի ես ոչ ոքին ոչ ասել կարող էի, ոչ էլ ասել եմ։ Դուք յիշում էք, որ ես Ձեր յիշեալ յօդուածի մասին պատասխանեցի. եթէ ինձ յայտնի լինէր թէ Դուք կաշառուած էք գրել, ես այդ էլ հրապարակաւ կը յայտնէի։ Այժմ հաւատացնում եմ ձեզ, թէ ինչ որ հրապարակաւ չեմ ասել, այն ես սովոր չեմ մասնաւոր խօսակցութեանց մէջ յայտնել։ Ուրեմն Ձեր լսած լուրը սուտ է։ Ինձ թւում է մինչև անգամ, թէ մի չար ոգի կամեցել է ձեզ վերայ ծաղրել և փորձել թէ որքան հաւատ պիտի ընծայէք մի հրէշական լրի։ — Ի սկզբան կարծեցի, թէ Դուք այդ լուրերին այն նշանակութիւնը կու տաք. որն որ դոցա վայել է։ Բայց որչափ զարմացայ, որ Ձեր ֆէլիէտօնիստը դորա ակնարկութիւնն է անում. ուրեմն Դուք և նա հաւատացել էք, թէ ես ասել եմ այն, ինչ որ ինձ յայտնի չէ։ Եւ մինչև անգամ այժմ պարզում էք, թէ ով է այն օտարը……… Բիսմարկը???? Այժմ Դուք յոյս ունիմ կը հաւատաք, որ ես մի այդպիսի այլանդակ միտք չէի կարող յայտնել։ Ես չը գիտեմ ինչպէս Ձեր կարծիքով, իսկ իմ պարկեշտ կարծիքով Բիսմարկն ուրիշ գործերով է զբաղուած, եւ դժուար թէ նորա պօրտֆօլի մէջ տեղ լինի «Մշակի» համար, թէպէտ ի հարկէ մեր պօրտֆօյլի համար շատ թանկագին է։

Այն ինչ Դուք այժմ հաւատացած կը լինիք, որ ես Ձեզ Բիսմարկից կաշառուած չեմ համարում, թոյլ տուեցէք ինձ, գիտնական Դօկտօր, բացարձակ և հրապարակաւ արտասանել այն իմ մտքերն, որ Ձեր ֆէլիէտօնն իմ մէջ զարթեցրեց։

Աշխարհքը կարծես դատապարտուած է, որ միշտ Դոն Կիխօտներ ունենայ։ Այս բարի ցնորուածը, դեռ առաւօտը չը լուացած իրան երևակայում է հալածուած, չարչարուած, տանջուած. բայց ոչ ոք ոչ հալածում, ոչ չարչարում և ոչ էլ տանջում է. որովհետև ամէնքը գիտեն, որ նա բարի և ցնորուած լինելով՝ անվնաս էակ է։ — Ոդոմելին փողոցների մէջ մամ գալիս՝ մտածում է…… ахъ какъ пріятно быть преслѣдуемымъ… Հայոց խմբագիրը պէտք է հալածուի, չարչարուի, տանջուի…… Նորան պէտք է կաշառուած համարեն……… կաշառուած Բիսմարկից…… ахъ какъ пріятно быть կաշառուած։

Պ. Դօկտօր մեծ յոյս ունիմ, որ Բաղքցին չուտով մի ֆէլիէտօն կը գրէ այս վերնագրով՝ Հայոց տանջուած խմբագիր — Բիսմարկից կաշառուած, որ ինձ և Ձեզ շատ պիտի զուարճացնէ։ Առ այժմ ես նորան հաղորդում եմ մի հետաքրքիր լուր. ես Բիսմարկին հեռագրեցի, թէ արդեօք ուղիղ է, որ նա «Մշակին» կաշառել է. և նա պատասխանեց՝ Pfui, abscheulich!

Ընդունեցէք իմ խորին

յարգանքը, Պ. Դօկտօր։

Ս. Մանդինեանց.

1876 Թ.

մարտի 26.

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆ, ՍԻԲԻՐ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Երկրներ, (բացի Պարսկաստանից և Ասիական-Տաճկաստանից) գնում է ամեն օր, բացի կիրակի օրից։

ԵՐԵՒԱՆ	— Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
ԱԼԵՔՍԱՆԴ -	
ԲԱԳՈՒ	— Չորեքշաբթի և ուրբաթ
ՆՈՐԲԱՅԱԶԷԹ	— Չորեքշաբթի։
ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹ. ՎԵՐԱՅ ԳՏՆՎԱԾ ՏԵՂԵՐԸ	— Ամեն օր, բացի կիրակի։
ՈՒԴԻԴ	— Չորեքշաբթի։
ՕԶՈՒՐԳԷԹ	— Երկուշաբթի և ուրբաթ,
ԱԽԱԼՑԻԽ	— Երկուշաբթի և ուրբաթ,
ԲՈՐԺՈՄ	Երկուշաբթի և ուրբաթ. իսկ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը ամեն օր, բացի կիրակի օրից։
ԲԵԼԿԱԻՉԻ (Աղջաղալա)	— Երկուշաբթի և ուրբաթ,
ԲԱԲՈՒ (Նաջաֆ-կուլու ղեա)	— Երկուշաբթի, երեքշաբաթ. և ուրբաթ։
ՆՈՒԽԻ, ՑԱՐՍԿԻ - ԿՈԼՈԴՑԻ (Թելավ-Սիղնաղի ճանապարհ) - ՋԱՔԱԹԱԼԱ, ՍՂՆԱԽ, ԹԵԼԱՒ և ԼԱԳՕԴԵԽ։	Երեքշաբթի և շաբաթ,

—

ՓՕԹԻ—ԹԻՖԼԻԶԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(սեպտեմբերի 1-ից)

I

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔ.

ԹԻՖԼԻԶԻՑ դուրս է գալիս № 2 գնացքը առաւօտեան 9 ժ. 36 ր., հասնում է ԽԱՇՈՒՐ 2ժ. ղկնի ճաշի և ՓՕԹԻ — գիշերուայ 11 ժ 44 ր.։

ՓՕԹՈՒՑ դուրս է գալիս № 1 գնացքը առաւօտեան 8 ժ.40 ր. հասնում է ԽԱՇՈՒՐ 5 ժ. 41 ր. ղկնի ճաշի և ԹԻՖԼԻԶ գիշերուայ 10 ժ 16 րոպ.

II

ԽԱՌՆ ԳՆԱՑՔ.

ԹԻՖԼԻԶԻՑ դուրս է գալիս № 8 գնացքը երեկոյեան 4 ժ. 54, հասնում է ԽԱՇՈՒՐ գիշերուայ 11 ժ. 10 ր. և ՍՈՒՐԱՄ — գիշերուայ 11 ժ. 37 ր.։

ՍՈՒՐԱՄԻՑ դուրս է գալիս № 7 գնացքը գիշերուայ 12 ժ. 37 ր. հասնում է ԽԱՇՈՒՐ գիշերուայ 12 ժ. 51 ր. և ԹԻՖԼԻԶ — առաւօտեան 7 ժ. 24 ր.

—

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ (Մուզէում բացէ Երկուշաբթի, Ուրբաթ և Կիրակի օրերը առաւօտեան 10 ժամից մինչև կէս օրից յետոյ 3 ժամը։

—

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ երթևեկհիւանդների համար գտնվում է Սեմինարիայի գիմացը Ց. Չիթախեանի տանը: Հիւանդներին ընդունում են ամեն օր առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժամը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Գիտենալով կանոնաւոր հաշուապահութիւն (бухгалтерія) ցանկանում եմ հաշուապահ լինել: Հաշիւները պահում եմ Հայոց լեզուով: Ինձ իւրեանց մօտ այդ պաշտօնում ընդունել ցանկացող պարոններից խնդրում եմ պայմանների մասին դիմել ինձ հետևեալ հասցէով,

Ордубатъ (Акулисъ)

Минасу Теръ Шмавоньянцъ:

(3)—1

Ներսիսեան Հայոց Ազգային—Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը, պարտաւորութիւնը համարելով յարգել յիշատակը հանգուցեալ Աւետիքայ Մովսիսեան փիրոյեանց, կարգադրել է կատարել հոգեհանգիստ նորա գերեզմանի վերայ Սուրբ Նշան եկեղեցու գաւթումը, ապրիլ ամսոյ 7ին, Աւետեաց տօնին, չորեքշաբթի օրը պատարագից յետոյ: Այս մասին յայտնում է Թիֆլիզցի Հայ հասարակութեանը: Արժանայիշատակ փիրոյեանցը, կտակաւ նուիրել է Ներսիսեան Դպրոցին մի հոգևոր կալուածք, որի արդիւնքը գործ է գրվում յօգուտ նոյն դպրոցի:

Ներսիսեան Հայոց Ազգային—Հոգևոր դպրոցի Հոգաբարձութիւնը, պարտաւորութիւնը համարելով յարգել յիշատակը հանգուցեալ Յովսէփայ Յովհաննէսեան Էֆենդեանց, կարգադրել է կատարել հոգեհանգիստ նորա գերեզմանի վերայ Վանքի սուրբ Աստուածածնայ եկեղեցու գաւթումը, ապրիլ ամսոյ 18ին, Աշխարհամատրան կիւրակէի օրը, պատարագից յետոյ: Այս մասին յայտնում է Թիֆլիզցոց Հայ հասարակութեանը: Արժանայիշատակ Էֆենդեանցը, իւր կենդանութեան ժամանակը, կտակաւ նուիրել է Ներսիսեան դպրոցին մի նշանաւոր գումար, որի տոկոսիքը գործ է գրվում յօգուտ նոյն դպրոցի:

(3)—1

Մեղուի խմբագրատանը վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը,

ա).

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

1) "ԱՇՏՕՆԻ ԸՆՏԱՆԻՔ", Թարգմանութիւն Տ. Ն. Ա. գինն է 20 կ.

2) „ՍԷՐ և ՄԱՀ„ ողբերգութիւն հեղինակ. Գ. Բարխուդարեանի, գինն է 40 կ.

3). «ԲԼՕՄԼԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ», Թարգմանութիւն Ա. Նահապետեանի, գինն է 40 կ.

4). «ԵՐԿՈՒ ՔՈՅՐ», վէպ Գիւղական կեանքից. հեղինակ. Ղ. Աղայեանի, գինն է 50 կ.

Ե). "ՄՇԱԿ„ (պատկեր) գործ Ա. Քիշնիշեանի. գինն է 5 կ.

6). ՀԱՄԱՌՕՏ ՀԱՅԵԱՑՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ, գործ. Հ. Ղուկասեանի. գինն է 10 կոպէկ։

7). ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ (Ծնողաց և ուսուցչաց համար) Ղ. Աղայեանցի. գինն է 20 կ.

բ).

ՑՕԳՈՒՏ Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆ

ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ.

8). ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՎԵԶՈՒՎԵԱՆ ՀՐԱԲՈՒԽ ՍԱՐԻ ՎԵՐԱՅ, հեղինակ Վ. Խօջայեանի, գինն է 1 ռուբ.

9). ՎԻԼԼԷԻ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ, Թարգմանեաց ՕՐ. Գ. Յովհաննիսեան, գինն է 30 կ. (ուսումնարանների համար 20 կոպ.-

գ).

ՏՊ. 'Ի ԹԵՈԴՈՍԻԱ.

10). ՁԻՆԻԱԹ—ԴԻՆԻԱԹ, (գրաւոր չորս արարուածով) և ՄԵՆՈՒՄ ԻՐԵՆ ԽՈՍՏՈՒՑԵՐ ԵՄ, (Վոդեվիլ մէկ արարուածով գործ Յ. Գեղամեանի) գինն է 50 կ.

դ).

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

11) ՎԻԼՀԷԼՄ ՏԷԼԼ–Շիլլերի, Թարգմ. պ. Բարխուդարեանի: գինն է բնտիր թղթի վերայ—1 ռ. 20 կ. և հասարակ թղթի վերայ 1 ռ.

Մօտերումս Թիֆլիս վերադարձաւ պ. Ֆրանգիւլ Միլիքեանց հայ ատամնաբոյժը, կատարելագործվելով Եւրոպայում իւր արհեստի մէջ: Պարոնը անծանօթ չէ Թիֆլիսի հասարակութեան: Նորա բնակութեան տեղն է փոխադրվել այժմ մօտ պ. Տոլիմեանցների տանը:

(3)—2

Դուրս եկաւ մամուլի տակից պ. Սեդրակ Մանդինեանի գրքոյկը „Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար — ժամանակի մի հարց": Հրատարակութիւն պ. Աբգար Յովհաննիսեանի։ Գինն է 60 կոպ. ծախվում է Թիֆլիզի բոլոր գրավաճառների մօտ։

(3)—1

Ինքնըստինքեան Թիֆլիսեան զգեստապատրաստ արհեստանոցը Նաւթլուղում հրաւիրում է թէ տղամարդոց և թէ կանանց, որոնք ցանկանում են ունենալ շարունակ աշխատանք այն է կարել արհեստանոցում զանազան արքունի շորեր, ստանալով վարձ իւրաքանչիւր կտորի համար առանձին, յայտնել իւրեանց ցանկութիւնը:

(10)—8

Կովկասեան ուսումնական շրջանի Հոգաբարձուի հրամանով մեր կառավարած տղաների պանսիօնը (երբեմն Ամիրաղեանի) յեղափոխած է Մասնաւոր վեց դասատուններից բաղկացած բէալական ուսումնարան՝ տեխնիկական բաժնով։

Նոքա, որոնք կը կամենան մանրամասն տեղեկութիւնք ստանալ իրանց որդոց այս դպրոցը տալու համար, կարող են գալ դէպի դպրոցը, որ գտնվում է Սաղոլոյ փողոցում Պետրոս Շաղինեանցի տանը, № 34։

Յ. Մելիք—Բէկլարեանց.

Գ. Թաւաքալեանց:

Դուրս եկաւ մամուլի տակից Նիկողայոս Տէր Յակոբեանցի յօրինած ընթերցարանի առաջին մասն (ընտանեկան կեանք) և վաճառվում է առանձին: Մնացեալ երկու մասերն նոյնպէս կտպագրուին շուտով և կվաճառուին առանձին առանձին: Իւրաքանչիւր մասի գինն է դումարով առնողների համար 20 կոպէկ, իսկ հատով առնողների համար 25 կոպէկ:

(2)—1

Որովհետև տարածուել է սխալ լուր, իբր թէ մենք մտադիր ենք փոխանցել մեր ուսումնարանը (մանկանց գիմնազիոն) այլոց, վասնորոյ հարկաւոր ենք համարում յայտնել ի գիտութիւն ամենեցուն, թէ մենք ոչ միայն չունինք այդ մտադրութիւնը, այլ և կամենում ուսումնարանն առաւել ևս բարեկարգել և յառաջացնել. հրաւիրեցինք մեզ ընկեր բնակի ուսումնարանի տեսուչ (ինսպէկտոր) պ. Իվաննէսեան և աքրակտական գիմնազիայի նախկին ուսուցիչ պ. Յովհաննիսեանցին:

Հիմնադիրք մանկանց գիմնազիայի Տփխիսու.

Ն. Տէր Յակոբեանց.

(3)—2 Ս. Մնասարեանց.